





2012 ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ - ՀԱՅԱՍՏԱՆ

Հունիս 2013

ՔՀԿ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ 3.9


2012 թվականը Հայաստանում նշանավորվեց խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններով: Այս տարի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) ավելի շատ էին ներգրավված ընտրական գործընթացում՝ կազմելով մի շարք կոալիցիաներ՝ ընտրությունները վերահսկելու և հասարակության իրազեկությունը բարձրացնելու համար, և լայնորեն օգտագործելով մոբիլիզացիայի, հաղորդակցման և

Հայաստանի 2012 ցուցանիշները



հանրային կապերի նոր տեխնոլոգիաներ: Բացի այդ, մի շարք ՔՀԿ ներկայացուցիչներ առաջադրեցին իրենց թեկնածությունները, իսկ նրանցից մի քանիսը հաղթեցին:


ՔՀԿ իրավական դաշտի բազմիցս քննարկված



փոփոխությունները 2012 թվականին չիրականացան: Սակայն ՔՀԿ-ներն ավելի ակտիվորեն էին ներգրավված օրենսդրության բարելավման ուղղությամբ շոշափելի քայլերի իրականացման մեջ և շարունակում էին համագործակցել պետական մարմինների հետ:

Ըստ ՀՀ Արդարադատության նախարարության տվյալների, Հայաստանում 2012 թ. հոկտեմբերի դրությամբ գրանցված եղել են 3,432 հասարակական կազմակերպություններ, 733 հիմնադրամներ և 301 իրավաբանական անձանց միություններ: Նախորդ տարվա համեմատ այս թվերը մի փոքր նվազել են, քանի որ մի շարք կազմակերպություններ փակվեցին՝ հարկային հաշվետվություններ չներկայացնելու համար:

ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ՝ 3.9



2012 թվականի ընթացքում ՔՀԿ իրավական դաշտում լուրջ փոփոխություններ չեղան:

Հայաստանի օրենսդրությամբ կարգավորվում են գրանցված ՔՀԿ-ների երկու առանձին տեսակ՝ անդամակցության վրա հիմնվող հասարակական կազմակերպություններ և անդամակցություն չունեցող հիմնադրամներ: Թե՛ հասարակական կազմակերպությունները, թե՛ հիմնադրամները գրանցվում են ՀՀ

Արդարադատության նախարարության ներքո գործող իրավաբանական անձանց պետական ռեգիստրում: Դիմորդները սովորաբար իրենց դիմումների պատասխանը ստանում են քսանօրյա ժամկետում, բայց պետեզիստրը հաճախ հավելյալ տեղեկություններ կամ փոփոխություններ է պահանջում ՔՀԿ կանոնադրություններում: Արդյունքում, ՔՀԿ-ները հաճախ ստիպված են լինում բազմաթիվ անգամներ այցելել պետեզիստր, որն էլ լրացուցիչ խոչընդոտներ է առաջացնում Երևանից դուրս գտնվող ՔՀԿ-ների համար: Ակնկալվում է, որ 2013թ. արդեն կգործի ՔՀԿ-ների առցանց գրանցման համակարգ. ներկայումս այս համակարգը մատչելի է մասնավոր ընկերությունների գրանցման համար: Ի լրումն դեպի Երևան բազմակի ուղևորությունների անհրաժեշտության վերացման, առցանց գրանցման համակարգը կվերացնի նաև պաշտոնյաների հետ դեմ առ դեմ փոխգործակցությունից բխող կոռուպցիոն ռիսկերը:

Օրենքը հասարակական կազմակերպություններին թույլ է տալիս ստեղծել ցանկացած տեսակի ղեկավար մարմին, որը կներկայացնի անդամների ընդհանուր ժողովը: Սակայն քանի որ ՔՀԿ-ների պաշտոնական ներկայացուցչական մարմինը, որպես կանոն, խորհուրդն է կամ վարչությունը, պետական ռեգիստրը հաճախ մերժում է այն կանոնադրությունները, որոնք առաջարկում են ղեկավարման այլընտրանքային կառույցներ:

2009 թվականից տեղական ՔՀԿ-ներն ու միջազգային կազմակերպությունները բազմաթիվ մտահոգություններ են արտահայտել «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի փոփոխությունների նախագծի մասին, նախաձեռնելով շահերի պաշտպանության ազգային քարոզարշավ, որը շարունակվել է նաև 2012 թվականին: Նախագիծը 2010 և 2011 թթ. մի քանի անգամ վերանայվել է: 2012թ. օգոստոսին ՀՀ Արդարադատության նախարարությունը (ԱՆ) հրապարակեց նախագծի հերթական տարբերակը, որն արտացոլում էր ՔՀԿ-ներից ստացված արձագանքները: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ները գտնում են, որ հետագա օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն կա, մասնավորապես

ՔՀԿ ֆինանսական կայունության, կամավորական գործունեության և շահերի պաշտպանության ոլորտներում:

2012 թվականին կառավարության և ՔՀԿ-ների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբը մշակեց ՔՀԿ-ների ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգը, որտեղ ներառված են ֆինանսական կայունությանը, կամավորությանը, հաշվետվական համակարգին, դատարաններում ՔՀԿ-ների ներկայացուցչությանը և ՔՀԿ-ների տեսակներին վերաբերող օրենքների փոփոխությունների առաջարկներ: Հայեցակարգը քննարկվել և վերջնական տեսքի է բերվել Արդարադատության նախարարության հետ համատեղ: Հայեցակարգի նախագիծը նախատեսվում է հանրային քննարկման ներկայացնել 2013 թվականի սկզբին: Կառավարության կողմից հայեցակարգի հաստատումից հետո հայեցակարգի դրույթների իրականացման համար կմշակվեն օրենսդրական նախագծեր, որոնք կներկայացվեն Ազգային ժողովի հաստատմանը: Բացի այդ, հասարակական խորհրդակցական մարմին հանդիսացող Հանրային խորհուրդը, որն ստեղծվել է 2009թ. նախագահի հրամանագրով, մշակել է ՔՀԿ զարգացման ռազմավարության հայեցակարգ ՔՀԿ-ների ընդհանուր վիճակի վերաբերյալ. նախագիծը 2012 թվականի վերջում շրջանառվեց շահագրգիռ կողմերի շրջանակներում:


Հասարակական կազմակերպությունների մասին օրենքը նշում է, որ հասարակական կազմակերպությունները կարող են լուծարվել միայն դատական կարգով: Մոտ հարյուր հասարակական կազմակերպություններ կառավարության կողմից լուծարվեցին 2012 թվականին, քանի որ չեն կարողացել ապահովել հարկային հաշվետվությունները: Նման ճնշում կիրառվում էր նաև հիմնադրամների նկատմամբ, որոնք 2012 թվականից պետք է սկսեին հրապարակել իրենց տարեկան հաշվետվությունները ոչ միայն թերթերում, այլև պետական ռեգիստրի պաշտոնական կայքում: Զգալի թվով հիմնադրամներ գրավոր նախագրուշացում ստացան ոչ լիարժեք հաշվետվությունների համար: Ընդ որում, ըստ հիմնադրամների ներկայացուցիչների, համակարգը դեռևս լիովին հստակ չէ, իսկ Արդարադատության նախարարությունը սահմանափակ վերապատրաստում և տեղեկություններ է տրամադրում այդ նոր համակարգի վերաբերյալ:

2012թ. հունիսին Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) հետաքննություն սկսեց Միվիլիթաս հիմնադրամի հիմնադիր Վարդան Օսկանյանի դեմ՝ փողերի ենթադրյալ լվացման գործով: Նախկինում արտաքին գործերի նախարար՝ Ազգային ժողովի պատգամավոր պարոն Օսկանյանը հայտարարեց, որ մեղադրանքն ունի քաղաքական շարժառիթներ: Այնուհետև հետաքննությունն ընդլայնվեց՝ ներառելով Միվիլիթաս հիմնադրամի գործունեությունը, իսկ Միվիլիթասի աշխատակիցների հանդեպ ճնշումներ ու հետապնդումներ սկսվեցին: «Պահանջում ենք դադարեցնել Վարդան Օսկանյանի քաղաքական հետապնդումը» քաղաքացիական նախաձեռնությունը ստորագրահավաք կազմակերպեց: ԱԱԾ պաշտոնյաները հարցաքննում էին քարոզարշավը գլխավորողներին, ինչպես նաև որոշ անհատներին, որոնք ստորագրել էին խնդրագիրը: Միվիլիթասի դոնորները, աջակիցներն ու գործընկերները նույնպես հարցաքննվեցին: Միվիլիթասը փորձեց պահպանել իր գործունեությունը և հրապարակային ներգրավումը, իսկ Միվիլիթասի առավել տեսանելի նախագիծը՝ Միվիլները, շարունակեց իր աշխատանքը զանազան քարոզչությունների ժամանակ:

Հասարակական կազմակերպությունների մասին օրենքով արգելվում է ցանկացած տեսակի ձեռնարկատիրական գործունեության մեջ ուղղակի ներգրավվումը, ներառյալ գնումների գործընթացի մասնակցությունը, սակայն հիմնադրամների համար նման արգելք չկա: ՔՀԿ-ներն ավտոմատ կերպով չեն ազատվում որևէ հարկատեսակից, թեև որոշ դեպքերում նրանք կարող են դիմել մարդասիրական օգնության պետական հանձնաժողովին՝ կոնկրետ ծրագիրը, որը բարեգործական է կամ ֆինանսավորվում է միջազգային դոնորի կողմից, ԱԱՀ-ից (ավելացված արժեքի հարկ) ազատելու համար: Տարեկան ավելի քան 58,3 միլիոն ՀՀ դրամի շրջանառություն ունեցող ՔՀԿ-ները պետք է վճարեն ԱԱՀ նույն սկզբունքով, ինչպես տնտեսվարող սուբյեկտները: Ոչ անհատները, ոչ էլ կորպորատիվ դոնորները առանձնահատուկ հարկային արտոնություններ չեն ստանում:

ՔՀԿ-ները լայնորեն օգտագործում են իրավաբանների փորձառությունը, որն այժմ հասանելի է նաև առցանց օրինակ, սոցիալական ցանցերի և կայքերի միջոցով: Վերջին մի քանի տարիների ընթացքում բազմաթիվ ցանցեր և կոալիցիաներ ևս իրավաբանական փորձագիտությունը հասանելի են դարձրել իրենց անդամ կազմակերպությունների համար:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ 3.8



Փորձագետները 2012 թվականին ՔՀԿ-ների կազմակերպչական կարողությունների որոշակի բարելավում են նշում: 2008-2009 թթ. միջազգային ֆինանսավորման անկման պատճառով ավելի քիչ ՔՀԿ-ներ են այժմ ակտիվ մնացել: Սակայն ոլորտի հիմնական դերակատարները շարունակում են զարգանալ և ամրապնդվել: Միջազգային կազմակերպություններն ու ծառայություն

մատուցող կազմակերպությունները (ՏՄԿ) նշում են, որ ՔՀԿ-ների կողմից կարողությունների զարգացման ծառայությունների մեծ պահանջարկ կա:

Նախորդ տարիների համեմատ ավելի շատ ՔՀԿ-ներ, ոչ ֆորմալ խմբեր և նախաձեռնություններ են ռազմավարական պլաններ մշակում՝ ոչ միայն դոնորների պահանջներին համապատասխանելու համար, այլ պլանավորման կարևորությունը գիտակցելու շնորհիվ: Նմանապես, շատ կազմակերպություններ ծրագրեր են մշակում՝ հիմնվելով իրենց ռազմավարական ծրագրերի վրա, և համեմատաբար ավելի քիչ ՔՀԿ-ներ են հարմարեցնում իրենց առաքելությունները դոնորների առաջնահերթություններին:

Շատ ՔՀԿ-ներում ղեկավարը որպես կազմակերպության միակ ներկայացուցիչ է հանդես գալիս և կայացնում է կազմակերպչական որոշումների մեծ մասը: ՔՀԿ-ների մեծամասնությունն ունի տնօրենների խորհուրդ կամ հոգաբարձուների խորհուրդ՝ ըստ կանոնադրության, չնայած խորհուրդները հաճախ զուտ խորհրդանշական դեր ունեն: Բացի այդ, ՔՀԿ անդամները երբեմն աշխատում են կազմակերպության աշխատակազմում:


ՔՀԿ-ներն ընդլայնել են նոր տեխնոլոգիաների, այդ թվում՝ ֆեյսբուք ցանցի օգտագործումն իրենց գործունեության լուսաբանման նպատակով: Այս փաստը հատկապես կարևոր է

մարզային կազմակերպությունների համար, քանի որ ընդլայնում է տեղեկատվության տարածման նրանց հնարավորությունները և օգնում տեղեկացված լինել ոլորտի՝ երկրում առկա զարգացումների վերաբերյալ: Ըստ Հայաստանի ամերիկյան համալսարանի շրջանավարտ Արմինե Շահբազյանի իրականացրած՝ տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (S2S) օգտագործման վերաբերյալ հետազոտության, վերջին տասնամյակում «S2S-ները զգալիորեն ավելացրել էին ՔՀԿ-ների հնարավորություններն ու արդյունավետությունը համախմբման և հանրայնացման բնագավառներում՝ բարելավելով կազմակերպությունների կարողությունները»:

Ֆինանսական մարտահրավերների պատճառներով ՔՀԿ-ները դժվարանում են երկարաժամկետ վարձատրվող մասնագիտական աշխատակազմի ընդունման և պահպանման հարցում, հետևաբար իրենց գործունեությունն իրականացնելու համար ՔՀԿ-ները լայնորեն օգտվում են կամավորական ներուժից: Բազմաթիվ կազմակերպություններ, ներառյալ «Հայ կամավորական կորպուսը», «Դեպի Հայքը», ԱՄՆ Խաղաղության Կորպուսը, AIESEC-ը և Եվրոպական կամավորական ծառայությունը, իրականացնում են նաև միջազգային կամավորների ընդգրկում:

ՔՀԿ-ների մեծամասնությունն ունի հիմնական գրասենյակային սարքավորումները, թեև շատերն ապավինում են հնացած սարքավորումներին, որոնք ձեռք են բերվել տասը կամ ավելի տարի առաջ: Ընթացիկ դրամաշնորհային սահմանափակումները սովորաբար թույլ չեն տալիս դրամաշնորհառուներին նոր սարքավորումներ ձեռք բերել: Ինտերնետ հասանելիությունը մարզերում 2012 թվականին աճել է:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ՝ 5.2



Ֆինանսական կայունությունը շարունակում է մնալ Հայաստանի ՔՀԿ կայունության ամենաթույլ կողմը: Սակայն ակնկալվում է, որ 2012թ. ընթացքում մշակված ՔՀԿ ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգում առաջարկված իրավական փոփոխությունները առաջիկա տարիների ընթացքում կխթանեն ՔՀԿ-ների ֆինանսական կայունությունը,

օրինակ, ՔՀԿ-ի ձեռնարկատիրական գործունեության արգելքի վերացման և նպատակային դրամազվիսային ֆոնդերի մեխանիզմի ներդրման միջոցով: Ի լրումն, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը հայեցակարգի շրջանակներում նպատակային դրամազվիսի վերաբերյալ օրենքի նախագիծ է մշակում:

Հայաստանում դեռևս լիարժեք չի ձևավորվել բարեգործության մշակույթը: Չնայած ՔՀԿ-ներն ավելի ու ավելի են ընդունում տեղական ներդրումներ կատարելու անհրաժեշտությունը, և արդեն առկա է որոշ հաջողված փորձ, այնուամենայնիվ, այս դաշտում ավելի մեծ փորձառության և ունակությունների անհրաժեշտություն կա:

Տնտեսվարող սուբյեկտները 2012թ. ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին հասարակական և մասնավոր սեկտորների համագործակցության նկատմամբ: Օրինակ, Օրանժ Արմենիա հեռահաղորդակցության ընկերությունը հետազոտության իրականացման նպատակով պայմանագիր կնքեց ՔՀԿ-ներից մեկի հետ, իսկ Կապանի հանքարդյունաբերական ընկերությունը դրամաշնորհներ տրամադրեց ՔՀԿ-ներին՝ որպես իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրի մի մաս:

Չնայած պետական մարմինները ֆինանսավորում են ՔՀԿ-ներին, այս ֆինանսավորումը հիմնականում տրամադրվում է ոչ թափանցիկ և ոչ մրցակցային հիմունքներով: Ըստ «Պրոֆեսիոնալները՝ հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ 2012թ. ուսումնասիրության՝ աջակցության ամենամեծ ծավալը շարունակում են ստանալ սպորտային ֆեդերացիաները և պետական ֆինանսավորմամբ ստեղծված կամ պետական պաշտոնյաների հիմնադրած կազմակերպությունները: Որոշ ՔՀԿ-ներ, հիմնականում նրանք, որոնք սոցիալական ծառայություններ են մատուցում ծերերին և հաշմանդամներին, կանոնավոր պետական ֆինանսավորում են ստանում նախարարությունների միջոցով: Թեև որոշ համայնքներ, այդ թվում Վանաձորը, Մարտունին և Գյումրին, ՔՀԿ-ների գործունեության ֆինանսավորման նպատակով բյուջեի հատուկ տող են սահմանել, ՔՀԿ-ները կամ անտեղյակ են, կամ էլ չեն ցանկանում դիմել այս ֆինանսավորումը ստանալու համար, քանի որ դրամաշնորհային գումարը շատ փոքր է, կամ էլ ենթադրելով, որ մրցակցությունն արդար չի լինի:

ՔՀԿ-ները խուսափում են վճարովի ծառայություններ մատուցելուց, ինչպես իրավական սահմանափակումների, այնպես էլ գործարար հմտությունների ու անձնակազմի կարողությունների պակասի պատճառով:

Չնայած հայաստանյան հասարակական կազմակերպությունները անդամության վրա են հիմնված, շատ քչերն են անդամավճար հավաքում: Օրինակ, Գյումրիի Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնը անդամակցության հաջողված քաղաքականություն ունի. եթե մոտ 150 անդամներից որևէ մեկը չվճարի անդամավճարը ավելի քան երեք ամիս, ապա նրանց անդամակցությունը ավտոմատ կերպով դադարեցվում է: Անդամավճարների հավաքման գործում առավել արդյունավետ են այն կազմակերպությունները, որոնք իրենց անդամակիցներին ծառայություններ են մատուցում կամ ներգրավում են իրենց ծրագրերում:


Միջազգային դոնորների ֆինանսավորումը շարունակում է կազմել ՔՀԿ-ների բյուջեի զգալի մասը: Այս ոլորտում գլխավոր դերակատարներն են ԱՄՆ ՄԶԳ-ն և զարգացման պետական այլ գործակալությունները, ինչպես օրինակ Կանադայի միջազգային զարգացման գործակալությունը, Նորվեգիայի և ԱՄՆ դեսպանատները, ինչպես նաև Եվրոպական Միությունը: Այլ միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են Բաց Հասարակություն Հիմնադրամներ-հայաստանյան մասնաճյուղը, Վորլդ Վիժն Հայաստանը և Օքսֆամ ՄԲ Հայաստանը, նույնպես դրամաշնորհներ են տրամադրում ՔՀԿ-ներին գործունեության, զարգացման ծրագրերի և ծառայությունների իրականացման նպատակով:

Քաղաքացիական զարգացման ամենանշանակալի ծրագիրը ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության (ՔՀՏԻԱԾ) ծրագիրն է, որը Քաունթերփարթն իրականացնում է սկսած 2011

թվականից: Ծրագրի նպատակն է բարձրացնել քաղաքացիական ակտիվության մակարդակը տեղական և ազգային մակարդակներում և նպաստել ավելի մասնակցային, ապակենտրոնացված, արդյունավետ և պատասխանատու տեղական կառավարմանը:

Շատ ՔՀԿ-ներ շարունակում են բարելավել ֆինանսական կառավարման իրենց համակարգը, մասնավորապես հաշվապահական, ֆինանսական պլանավորման և բյուջետային համակարգերը: Բոլոր հիմնադրամները իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են ինչպես տպագիր, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով, ինչպես և սահմանված է օրենքով:

ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ 3.4



ՔՀԿ-ները և ոչ ֆորմալ քաղաքացիական խմբերը 2012թ. ակտիվ քարոզարշավներ իրականացրեցին շրջակա միջավայրի, ընտանեկան բռնության և այլ հարցերի վերաբերյալ: Այս տարի քարոզարշավներն ավելի լավ էին կազմակերպված և ինստիտուցիոնալացված:

Բնապահպանական խմբերը և կոալիցիաները նախորդ տարվա նման 2012թ. ևս առավել

հաջողակն էին շահերի պաշտպանության գործում: Առավել նշանավոր էր «Մենք ենք այս քաղաքի տերը» քաղաքացիական նախաձեռնության կողմից փետրվարին ձևավորված շարժումը՝ Երևանում Մաշտոցի պուրակը ապօրինի շինարարությունից պաշտպանելու նպատակով: Երեք ամիս տևած նստացույցից, խնդրագրերից և տարբեր ղեկավար մարմիններին ուղղված դիմումներից հետո շինարարությունը դադարեցվեց և վիճարկվող կրպակներն ի վերջո հեռացվեցին Նախագահի հրամանով:

Մեկ այլ հաջողված բնապահպանական շարժում բողոքում էր գերմանական մի ընկերության կողմից Սյունիքի մարզում գտնվող Քաջարան գյուղում բաց հանքի շահագործման ծրագրի դեմ: Քաջարանի բնակիչները դիմադրեցին այդ որոշմանը, պնդելով, որ հանքարդյունաբերական գործունեությունն աղետալի կլինի տեղական էկոհամակարգի համար: Բնապահպան ակտիվիստները և կազմակերպությունները, ինչպես նաև Ժառանգություն կուսակցության որոշ պատգամավորներ աջակցեցին գյուղին և համազգային քարոզարշավ կազմակերպեցին, որն էլ օգնել է մինչ օրս դադարեցնել այդ ծրագիրը:

Այս տարի ՔՀԿ-ներն ավելի ակտիվ են համագործակցել Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: 2012թ. հունիսին ՔՀՏԻԱԾ ծրագրի նախաձեռնությամբ իրականացվող «Օրենսդրական օրակարգի քննարկման օրերը» ծրագրի շրջանակներում տարածաշրջանային համաժողովներ կազմակերպեցին, որտեղ մոտ յոթանասուն համայնքների ներկայացուցիչներ, այդ թվում՝ ՔՀԿ-ներ, ակտիվիստներ և տեղական իշխանության մարմիններ, հիսունհինգ օրենսդրական առաջարկություն մշակեցին առողջապահության, մարդու իրավունքների, սոցիալական և այլ հարցերի շուրջ: Առաջարկությունները ներկայացվեցին ԱԾ մշտական հանձնաժողովներին և քննարկվեցին

2012թ. աշնանը: Արդյունքում, տասնվեց առաջարկություններ ստացան գործողության հանձնառություն, իսկ ինը օրենսդրական նախաձեռնություններ ներկայումս խորհրդարանի օրակարգում են: Հանրային ցանցը, որն ստեղծվել է 2008 թվականին և ունի 150 անդամ ՔՀԿ, խթանում է ՔՀԿ համագործակցությունը խորհրդարանի հետ և 2013թ. սկզբին նախատեսում է համագործակցության հուշագիր ստորագրել ԱԺ նոր գումարման հետ:


«Քվեարկիր հանուն փոփոխության» քարոզարշավի շրջանակներում Օքսֆամ Հայաստանը և Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցը ԱԺ ընտրված քաղաքական կուսակցությունների անդամների հետ մի շարք կլոր-սեղան քննարկումներ կազմակերպեցին: Քննարկումները վերաբերում էին առողջապահության և գյուղատնտեսության բնագավառներում բարեփոխումների իրագործմանը: Քննարկման արդյունքները հետագայում ուղարկվեցին կուսակցություններին՝ ի հիշեցում իրենց ստանձնած խոստումների: Արդարադատության նախարարության կողմից ՔՀԿ-ների ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգի հաստատումը նույնպես ՔՀԿ-կառավարություն հաջողված համագործակցության արդյունք էր:

2012թ. ՔՀԿ որոշ ներկայացուցիչներ ընտրվեցին խորհրդարանի և տեղական ինքնակառավարման մարմինների կազմում: ՔՀԿ նախկին անդամների ներկայությունը օրենսդրական մարմիններում նպաստում է քաղաքացիական հասարակության կողմից բարձրացված հարցերի հանդեպ պետական մարմինների ավելի բաց լինելուն և ՔՀԿ-ներին՝ կարծիք արտահայտելու ավելի մեծ հնարավորություն է տալիս: 2012թ. սեպտեմբերի՝ Գյումրիի տեղական մարմինների ընտրություններին տեղական ՔՀԿ ղեկավարները ստեղծեցին «Քաղաքը մերն է» նախաձեռնությունը՝ ավագանու պաշտոնի համար առաջադրված յոթ ճանաչված հասարակական գործիչների թեկնածությանը օժանդակելու և տեղական իշխանության դերի, հասարակության մասնակցության մեխանիզմների և իրենց քաղաքին տեր կանգնելու անհրաժեշտության մասին հանրային իրազեկման նպատակով: Թեև յոթ ակտիվիստներից ավագանի ընտրվեց միայն մեկը, զգալի փոփոխություն նկատվեցին թե՛ տեղական իշխանության մոտեցումների, թե՛ քաղաքացիների վերաբերմունքի մեջ: Ավագանու ժողովները այժմ հեռարձակվում են ուղիղ եթերով, մշակվել է ավագանու անդամների էթիկայի կանոնների նախագիծը, իսկ տեղական իշխանությունը տարբեր սոցիալական լրատվամիջոցներ և էլեկտրոնային գործիքներ է օգտագործում իր գործունեությունը լուսաբանելու և նորություններ հաղորդելու նպատակով:

Չնայած այս հաջողված օրինակներին, ՔՀԿ-կառավարություն համագործակցությունը հաճախ տեղի է ունենում միայն միջազգային և դոնոր աջակցության արդյունքում, կամ էլ քաղաքական գործչի անձնական շահագրգռվածության շնորհիվ, այսինքն, նման համագործակցության հետագա ինստիտուցիոնալացման անհրաժեշտություն կա:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ՝ 3.9

ՔՀԿ-ներն ավելի ու ավելի շատ են օգտագործում կարիքների գնահատումը և հետադարձ կապը, որպեսզի ծառայություններ մատուցելիս ավելի լավ արձագանքեն համայնքի կարիքներին. այնուամենայնիվ, դեռևս առկա է նաև դոնորների գերակայությունների վրա հիմնվելու միտումը:




ՔՀԿ-ները խոցելի խմբերին տրամադրում են իրավական, սոցիալական և բժշկական աջակցություն, ինչպես նաև ոչ-ֆորմալ կրթություն և տարբեր բնագավառներում կարողությունների զարգացում: 2012թ. բազմաթիվ ՔՀԿ-ներ ներգրավվեցին խորհրդարանական ընտրությունների գործընթացում. նրանք իրականացնում էին հանրային իրազեկման, ընտրողների

ցուցակների ճշգրտման, ընտրությունների դիտորդության և ՋԼՄ-ների գործունեության մոնիթորինգի աշխատանքներ: Այս գործունեության համար ՔՀԿ-ները նոր գործիքներ էին օգտագործում՝ ներառյալ ֆլեշմոբերը, առցանց սոցիալական ցանցերը և բջջային կապի միջոցները: Օրինակ՝ iDitord-ը հնարավորություն էր տալիս քաղաքացիներին ընտրախախտումների մասին հաղորդել ինչպես առցանց, այնպես էլ SMS հաղորդագրությունների, թվիթերի և թեժ գծի միջոցով: Միվիլիթաս Հիմնադրամը իր Միվիլնեթ հեռուստաընկերության միջոցով խորհրդարանական ընտրություններին առնչվող տարբեր թեմաներով զեկույցներ էր հեռարձակում, ինչպես նաև վեց հանրային բանավեճ էր կազմակերպել մի շարք քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ, որոնք ևս հեռարձակվեցին civilnet.am կայքով:

Սահմանափակ թվով ՔՀԿ-ներ ունեն սոցիալական ձեռնարկություններ, որոնք թույլ են տալիս կազմակերպության որոշ ծախսեր հոգալ և շահառուներին ապահովել աշխատանքի հնարավորություններով: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ ՔՀԿ-ների ծախսաձեռնարկումն ապահովելու համար օրենսդրական փոփոխություններ և կարողությունների զարգացման նախաձեռնություններ են անհրաժեշտ:

Հինգ ՔՀԿ-ներ առաջին անգամ պետական հավաստագրեր ստացան պետական ծրագրերի շրջանակներում ուսուցիչների վերապատրաստման համար. ծառայություն, որը նախկինում պետական կազմակերպությունների մենաշնորհն էր: Նախարարությունները շարունակում են ծառայությունների մատուցման համար որոշ ՔՀԿ-ներին սահմանափակ թվով սուբսիդիաներ և դրամաշնորհներ տրամադրել: Հայաստանի առաքելական եկեղեցին ընդլայնել է իր աջակցությունը համայնքներում սոցիալական և մշակութային ծրագրեր իրականացնող կրթական խմբերին և կազմակերպություններին:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ՝ 3.4



ՔՀԿ-ների ենթակառուցվածքը 2012 թվականին փոքր-ինչ բարելավվել է: Ռեսուրսային կենտրոնները և կոալիցիաները ողջ տարվա ընթացքում ակտիվ են եղել, բարելավվել է նաև միջսեկտորային համագործակցությունը:

Եվրասիայի համագործակցության հիմնադրամի՝ «Լրատվության

այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի շրջանակներում «Ինֆոտուն» ռեսուրս կենտրոններ հիմնադրվեցին Վանաձոր, Գյումրի, Արմավիր, Մարտունի և Գորիս քաղաքներում: Կենտրոնները ՔՀԿ-ներին, համայնքային խմբերին և քաղաքացիներին տրամադրում են դասընթացներ և սեմինարներ բլոգի ու ժամանակակից լրատվության վերաբերյալ, համացանցից օգտվելու հնարավորություն, ինչպես նաև հանդիպումների սրահ:

ՔՀՏԻԱԾ ծրագիրը մեծածավալ աջակցություն է տրամադրում ՔՀԿ սեկտորին: Երեք ԾՄԿ-ներ դասընթացներ, խորհրդատվական աջակցություն և դրամաշնորհների կառավարում են իրականացնում: Մոտ 500 երիտասարդներ վերապատրաստվել են համայնքային զարգացման, կամավորների հավաքագրման և կառավարման, ծրագրի առաջարկի մշակման, հաղորդակցության, առաջնորդության, դրամահավաքների և անդամակցության զարգացման ոլորտներում: Բացի այդ, դասընթացներ իրականացվեցին արդյունավետ և թիրախային հաղորդագրությունների մշակման վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում 2013թ. համայնքային խմբերի անդամների համար կիրականացվեն ծրագրի մշակման և կառավարման դասընթացներ:


2012թ. ՔՀԿ-ներն ավելի շատ կոալիցիաներ ստեղծեցին կոնկրետ խնդիրների շուրջ: Եթե անցյալում կոալիցիաները հաճախ ստեղծվում էին դոնորների պահանջները բավարարելու նպատակով, այս տարվա կոալիցիաները ստեղծվում էին շահառուների կարիքներին կամ հրատապ հարցերին արձագանքելու համար: Ինչպես նշվեց, շրջակա միջավայրի խնդիրներին առնչվող կոալիցիաներն ամենահաջողակն էին: Այլ հաջողակ կոալիցիաներ ստեղծվեցին խորհրդարանական ընտրությունների դիտորդության և ընտանեկան բռնությունների դեմ պայքարելու համար: Ընտրությունների հետ կապված գործունեություն ծավալող կոալիցիաները բազմաթիվ էին: Ընտրություններին ընդառաջ Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցի 27 անդամ կազմակերպություններ նախաձեռնեցին «Քվեարկիր հանուն փոփոխության» քարոզարշավը՝ պատգամավորության թեկնածուներին առողջապահության և գյուղատնտեսության բնագավառներում կոնկրետ բարեփոխումների անհրաժեշտությունը բացատրելու նպատակով: Հայաստանյան ՔՀԿ-ները, այդ թվում «Ընտրությունը քոնն է» ամենամեծ տեղական անկախ դիտորդը, ընտրությունների դիտորդության ընդհանուր մեթոդաբանություն որդեգրեցին:

Այս տարի ՔՀԿ-ներն ավելի շատ համագործակցեցին պետական կառույցների հետ: Նախքան խորհրդարանական ընտրությունները, ՀՀ գլխավոր դատախազությունը միջազգային և տեղական ՔՀԿ-ներ ներառող աշխատանքային խումբ ստեղծեց՝ ազատ և արդար ընտրություններ ապահովելու համար: Զբաղվածության պետական կենտրոնները 11 համանքներում ձևավորեցին բիզնես կառույցներ և ՔՀԿ-ներ ներառող խորհուրդներ: Սյունիքում բիզնեսի, ԶԼՄ-ների, ՔՀԿ-ների և տեղական իշխանությունների մասնակցությամբ մարզային ֆորումներ անցկացվեցին՝ գաղափարներ փոխանակելու և համատեղ միջոցառումներ նախաձեռնելու նպատակով: Չնայած նախարարությունները 2008-2009թթ. հիմնադրեցին կոլեգիալ մարմիններ՝ ՔՀԿ-ների ներգրավվածությունը քաղաքականության ու ռազմավարության ձևավորման գործընթացներում ապահովելու համար, քիչ նախարարություններ են լիարժեք գիտակցում այդ կառույցների ներուժը, իսկ որոշները կոլեգիաներ ստեղծեցին առանց ՔՀԿ-ների ներգրավման:

ՔՀԿ-ները, հատկապես մարզերում, ակտիվորեն համագործակցում են ՁԼՄ-ների հետ՝ տեղեկատվություն տարածելու և իրենց քարոզարշավներին աջակցություն ստանալու համար: Մասնավոր ընկերությունները ևս համեմատաբար ավելի հաճախ են դիմում ՔՀԿ-ներին իրենց բարեգործական և/կամ հետազոտական ծրագրերն իրականացնելու համար, թեև այս միտումը դեռևս շատ փոքր է:

Մի քանի տեղական հիմնադրամներ՝ ներառյալ Եվրասիա համագործակցության հիմնադրամը և Օրանժ հիմնադրամը, փոքրաքանակ դրամաշնորհներ են տրամադրում տեղական ՔՀԿ-ներին: Համայնքային հիմնադրամները Հայաստանում դեռևս զարգացած չեն:

ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿՎԱԼՈՒՄ՝ 4.0



ՁԼՄ-ների կողմից ՔՀԿ-ների լուսաբանումը 2012թ. մի փոքր աճել է՝ հիմնականում ընտրությունների ընթացքում ՔՀԿ-ների գործունեության շնորհիվ: Առցանց լրատվամիջոցները ՔՀԿ գործունեության լուսաբանման գործում ավելի ակտիվ ու պատրաստակամ են:

ՔՀԿ-ների մեծ մասն անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ չունի

հասարակայնության հետ կապերի գործունեության ընդլայնման համար, բայց ավելի ու ավելի շատ է գիտակցում հրապարակայնության անհրաժեշտությունը: Էլեկտրոնային հաղորդակցությունը և կապերի հաստատման առցանց միջոցները ընդլայնել են ՔՀԿ-ների տեսանելիությունը: Բազմաթիվ ՔՀԿ-ների համար արդեն անցել է այն ժամանակը, երբ եռաձայլ թռուցիկները հասարակության հետ կապերի ամենարժեքունկ գործիքներն էին, և այժմ շատերն իրենց աշխատանքը ներկայացնում են սեփական վեբ կայքերում:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄՁՄԿ) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կառավարության և ՔՀԿ-ների միջև պակասում է փոխադարձ վստահությունը: Ըստ ուսումնասիրության, ՔՀԿ-ները գտնում են, որ կառավարությունը չի խրախուսում և դուրս է մղում նրանց քաղաքականության մշակման գործընթացից, իսկ պետական մարմինները նշում են, որ որոշ ՔՀԿ-ներ բավարար փորձագիտություն չունեն այդ գործընթացում կառուցողական ներդրում ապահովելու համար:

Խորհրդարանը պարբերաբար տեղեկատվություն և փորձաքննություն է հայցում որոշ ՔՀԿ-ներից: Որոշ պետական կառույցներ ապավինում են ՔՀԿ-ներին՝ որպես փորձագետ, և աջակցում են նրանց գործին, թեև դա առայժմ հատվածային բնույթ է կրում և նման համագործակցության ազդեցությունը դեռևս ապագայի խնդիր է:

Գործարար համայնքը հիմնականում թերահավատորեն է մոտենում ՔՀԿ-ներին, չնայած սահմանափակ թվով ընկերություններ համագործակցում են ՔՀԿ-ների հետ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության իրենց ծրագրերի շրջանակներում:

Հայաստանում ՔՀԿ-ների կողմից ընդունված էթիկայի համընդհանուր կանոններ չկան, թեև որոշ կազմակերպություններ նշում են իրենց արժեքներն ու սկզբունքները իրենց հանրային նյութերում ու ռազմավարական ծրագրերում: Սակավաթիվ ՔՀԿ-ներ հրապարակում են տարեկան զեկույցներ, որոնք ներառում են ծրագրային և ֆինանսական տեղեկատվություն, տպագիր տեսքով և/կամ իրենց վեբ կայքերում:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ինդեքսը (ՔՀԿ ԿԻ) վերլուծական մի գործիք է, որը չափում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի քաղաքացիական հասարակության սեկտորի առաջընթացը: Ինդեքսը հետևում է քսանինը երկրներում վերջին տասնհինգ տարվա ընթացքում առկա՝ քաղաքացիական սեկտորի առաջընթացին: Ինդեքսը ուսումնասիրում է քաղաքացիական հասարակության համար նպաստավոր միջավայրը՝ մասնավորապես իրավական միջավայրը, կազմակերպական կարողությունները, ֆինանսական կայունությունը, շահերի պաշտպանությունը, ծառայությունների մատուցումը, ենթակառուցվածքները և հանրային ընկալումը: Յուրաքանչյուր չափանիշ գնահատվում է յոթ նիշանոց սանդղակով, որտեղ 1–ը շատ առաջադեմ մակարդակն է նշանավորում, իսկ 7–ը՝ զարգացման ցածր մակարդակ: Ինդեքսը մշակվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից՝ յուրաքանչյուր երկրում տեղական կազմակերպության հետ համագործակցությամբ:

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք կապվել Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի հետ՝ cdpf@cdpf.am հասցեով:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի 2012թ. ՔՀԿ կայունության ինդեքսի անգլերեն տարբերակը կարող եք գտնել հետևյալ հասցեով. [http://www.usaid.gov/europe-
eurasia-civil-society](http://www.usaid.gov/europe-eurasia-civil-society)